№ 21 Հինգշաբթի Փետրվարի 26 1887 Հինգշաբթի Փետրվարի 26 № 21

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ազգ. օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑ **1887** ԹՒԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սովորական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Դրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆը (Բարօնեկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տունը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» դրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի այգիները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսանողներին օգնելու խնդիրը. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարիայի այժմեան դրութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.— ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տառերի հնչումն և գրութիւնը ռուսահայոց և տաճկահայոց մէջ.

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԻՆՆԵՐԸ

—

Մի երեսուն տարի առաջ Թիֆլիս քաղաքը ունէր բազմաթիւ մասնաւոր այգիներ. դրեթէ իւրաքանչիւր [illegible] ընտանեկան խիտ այգի կար։ Առատ բուսականութիւնը առողջացնում էր օդը և մեր քաղաքի աղքատնակութեանը յայտնի չէին այն հիւանդութիւնները, որոնք այժմ շատ սովորական են դարձել մեզ մօտ, մանաւանդ կրծքի և շնչառութեան գործարանների հիւանդութիւններ։ Հետզհետէ մեր կեղծ քաղաքակրթութեան ազդեցութեան տակ այգիները սկսեցին ոչնչանալ, թօղոտ փողոցների երկայնութեամբ բազմայարկ տներ շինվեցան և բնակիչները սկսեցին կատարելապէս խեղդվել թօղի և ապականված օդի մէջ։ Ամեն մեծ քաղաք ահագին դումարներ է գործ դնում բուսականութիւնը զարդացնելու, իսկ մեզ մօտ ուղիղ երբ քաղաքի աղքատնակութիւնը սկսեց աճել,—սկսեցինք ոչնչացնել բուսականութիւնը, որ անհրաժեշտ է բնակիչների շնչառութեան համար։

Միայն նախկին փոխարքայ, իշխան Բարիատինսկի, հասկացաւ Թիֆլիսի պէս քաղաքի մէջ այգիներ զարդացնելու անհրաժեշտութիւնը և զարդացնելով քաղաքի մէջտեղ Ալէքսանդրեան ընդարձակ այգին, շնորհեց մեզ այդ փառաւոր այգին, միջոց տալով քաղաքի չքաւոր աղքատնակութեանը և բնակիչների այն մասին, որ ամառ ժամանակ չէ կարող ամարանոցներ գնալ՝ վայելել քաղաքի մէջտեղ առատ բուսականութիւն և ազատ շունչ քաշել։

[illegible] ոչնչացրած է և նրա վրա պէտք է շինվի զինուորական Թանգարան (մուզէում). Նոյն այգու ստորին մասում, ինչպէս հաղորդում են լրագրիները, դիտաւորութիւն կայ ինտենդանտութեան շինութիւնը կառուցանելու, և մի և նոյն ժամանակ մեր քաղաքային վարչութիւնն էլ իր դումարով, չուզեց ընդունել Ալէքսանդրեան այգին իր վարչութեան տակ, խուսափելով այգու պահպանութեան վրա լինելի ծախսերից։

Միթէ մեր քաղաքի հոգատարները, դումարի մէջ նստող և կրթված դասին պատկանող ձայնաւորները՝ չեն հասկանում, որ վաղ թէ ուշ, տեսնելով որ քաղաքում հիւանդութիւնները և մահացութիւնը հետզհետէ աճում են, ստիպված կը լինեն զարդացնել այգիներ։ Բայց մի և նոյն ժամանակ, երբ նրանք կը հասնեն այդ համոզմանը՝ նոր այգիներ զարդացնելը նրանց անհամեմատ աւելի թանգ կը նստի, քան թէ այժմեան Ալէքսանդրեան այգու պահպանելը, որի պահպանութեան ծախսերը մեր ինտելիգէնտ ձայնաւորներին սաստիկ վախեցրին։ Դումայում, որպէս ձայնաւորներ, նստած են բազմաթիւ բժիշկներ, և ոչ մինը նրանցից չմտացաւ հասկացել դումային անպայման ընդունել Ալէքսանդրեան այգին, որ նորերումս կառավարութիւնը առաջարկում էր քաղաքին։ Ոչ ոք նրանցից չը կարողացաւ հասկացնել մեր քաղաքի այդ հոգատարներին, որ եթէ նրանք ճշդութեամբ և խստութեամբ պահանջում են քաղաքի բնակիչներից քաղաքային տուրքերը, պէտք է հոգային, որ նոյն հարկատու ամբոխը առողջ լինի, աշխատելու ոյժ ունենայ, որպէս զի իր հարկերը վճարի. ապրի ոչ թէ անառողջ, խեղդող, թօղոտ, ապականված օդի մէջ, այլ ունենայ շունչ քաշելու համար անհրաժեշտ բուսականութիւն, որ անհրաժեշտ է ոչ թէ միայն մարդու, այլ ամեն կենդանու, ամեն անասունի համար։

Եւ ժամանակով մեր քաղաքային վարչութիւնը ստիպված կը լինի ձեռնամուխ լինել քաղաքի մէջ այգիների զարդացմանը, բայց այն ժամանակ այդ գործը նրան կը նստի հարիւրապատիկ աւելի թանգ, քան թէ այժմ արդէն պատրաստ Ալէքսանդրեան այգու պահպանելը։ Քաղաքային վարչութիւնը ժամանակով ստիպված կը լինի թանգ գնով առնել մասնաւոր դետիններ, [illegible] զարդացնել այգիներ։ Եւ այդ ժամանակը շատ շուտով կը գայ, քանի որ բուսականութեան պակասութեան պատճառով հիւանդութիւնները մեր քաղաքում հետզհետէ զարդանում են, մահացութեան պրոցէնտը հետզհետէ աճում է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

—

Մարդասիրական ընկերութեան ընդհանուր ժողովը, խորհրդի առաջարկութեամբ, իր վերջին նստում, որի մանրամասնութիւնները տպված են «Մշակի» 17-որդ համարում, վճռեց այլ ևս որդեգիրներ չը պահել։ Այդ հիման վրա ընկերութեան խորհուրդը մերժեց իրան դիմող ինն ուսանողներին, որոնք ընկերութիւնից դրամական օգնութիւն էին խնդրում։ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնը իր այս տարվայ նախահաշիվով, ինչպէս այդ երևում է «Մշակի» № 10-ի մէջ տպված տեղեկութիւններից, աղքատ ուսանողներին օգնելու համար յատկացրել է ընդամենը 660 ռուբլի։ Այդպիսով թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում սովորող հայ ուսանողները հայոց բարեգործական—հասարակական հիմնարկութիւններից կարող են սպասել միմիայն 660 ռուբլի, քանի որ բացի այդ երկու ընկերութիւններից մենք չունենք ուրիշ ընկերութիւններ, որոնք ծառայէին այդ նպատակին։ Ուրեմն, ինչպէս պէտք է օգնութեան ձեռք հասցնել այն բազմաթիւ չքաւոր, դրամական միջոցներից բոլորովին զուրկ ուսանողներին, որոնք իրանց յոյսը դրել են մեծ մասամբ հասարակութեան վրա,—ահա մի հարց, որը անպայման ուշադրութիւն է հրաւիրում։

Հայ ուսանողների թիւը շատ մեծ չէ. դէպի բարձրագոյն դիտութիւն դիմող հայ երիտասարդները մի մեծ տոկոս չեն կազմում թէ Ռուսաստանի և թէ արտասահմանեան բարձրագոյն դպրոցներում։ Ամենագլխաւոր պատճառներից մէկը, որը արգելում է մեր երիտասարդութեան դիմել դէպի բարձրագոյն դպրոցները,—այդ նիւթական միջոցների պակասութիւնն է։ Այդ դեռ բաւական չէ. նոյն իսկ այն երիտասարդների մեծ մասը, որոնք արդէն նստում են ուսանողական նստարանների վրա, ստիպված են ամենատանջալի նեղութիւններ կրել իրանց ուսումը աւարտելու համար։ Վառ. երևակայութիւն չը պէտք է ունենալ հասկանալու համար, թէ ինչ կը նշանակի ապրել օտար երկրում ծանր հանգամանքների մէջ, և չունենալ միջոց ձեռք բերելու կենսական ամենակարևոր պիտոյքները։ Այդ բոլորի հետևանքը այն է լինում, որ ուսանողների մի մասը անկարող լինելով դիմանալ աղքատութեան ծանրութիւններին, զոհվում է օտարութեան մէջ, իսկ մի ուրիշ մասը ստիպվում է կիսատ թողնել ուսումը և մի որ և է պաշտօն փնտռել իր կոտրված, անբաղդացած կեանքը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ՀՆՉՈՒՄՆ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԵՒ ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՄԷՋ

—

Հայերէն լեզուի ընդունելութիւն անցեալի՝ տասնամեայ, զորձեալ, տուեալ ձևի վերջաւորութիւնը ժողովրդական լեզուն արդէն ԺԺԱ դարից ամփոփել և սկսել է գործածել եալ, փոխանակ եալի, որպէս և ցայժմ գործածվում է մեր մէջ։ Թիւրքահայերը (և Մխիթարեանք) այդ եալ վերջաւորութիւնը դարձուցել են ելի։ Օրին. տես ելեմ, փոխ. տես ելեմ, լս ելբ ես, փոխ. լս ելես, գործ ելբ է, փոխ. գործ ելէ և այլն, և այդ աղաւաղումը ընդհանրացած է ինչպէս խօսակցութեան, նոյնպէս և գրութեան մէջ։ Այդ այլայլութեան մէջ դարձեալ դեր խաղացող թիւրքաց լեզուն է։ Այս վերջինը չունի բայական խոնարհում I, վերջաւորութեամբ։ (Իսկ հրամայական եղանակի մէջ երևցող I, վերջաւորութիւնը՝ բայական խոնարհումից առաջացած չէ, այլ բառական արմատ է. օր. գէլ—գէլմէք (դալ) բայի, գիւլ—գիւլմէք (ծիծաղել) բայի, գաբըլ—գաբըլմաք (նեղանալ) բայի և այլն, իսկ դրա հակառակ տաճկերէնին յատուկ է Բ վերջաւորութիւնը. ինչպէս բիլնէրիմ, քըբարըմ, դօքունուրըմ և այլն։ Եւ թէպէտ բինէրիմ չի նշանակի հեծելեմ, այլ կը հեծնեմ, քըբարըմ չի նշանակի կոտրելեմ այլ կը կոտրեմ, բայց եթէ դոցանից ետ առնենք վերջին իմ կամ ըմ մասնիկները, որոնք համանիշ են հայերէնի եմ—ին կը մնայ, թինէր, քըբար, դօքունուր, որոնք կատարեալ ընդունելութիւններ են, այնպէս ինչպէս հայերէն—լսեր (եալ), հեծեր (եալ), կոտրեր (եալ) և այլն։ Մանաւանդ թէ այս ձև ընդունելութիւնները թիւրքերէնի մէջ ընտրելագոյն կամ գեղեցիկ ոճ են համարվում. ինչպէս, դիւլէր եիւզ, փոխ. գիւլէն եիւզ (ծիծաղողներս—ծիծաղերես), իշ գէօրիւբ ադամ, փոխ. իշ գէօրէն ադամ (գործ ունեցող մարդ), քէնդի քըյմէթինի թանըր քիմէնէ—փոխ. թանըրան (ճանաչող)։ Տարբերութիւնը յայտնի է միայն, որ այդ ընդունելութեան ձևերի վրա հայերէնը եմ, ես, է էականներն աւելացնելով չնում է ընդունելութիւն անցեալ, ուր որ թիւրքերէնը իր իմ, ին, դիր մասնիկներով նրանց վերածում է Սահմանական Ապառնի։ Սակայն թիւրքերէն ձևի խնայութիւնը հայերէն ձևի հետ, մնում է նոյն, որից և պայծառ տեսնվում է, որ թիւրքերէն ձևի շատ յաճախ գործածութիւնից հայերէն համանման ձևի համանման վերջաւորութիւնն էլ յարմարցվել է թիւրքերէնին։

Տաճկահայոց (մանաւանդ Կ. Պոլսեցոց) թէ խօսակցութեան և թէ գրական լեզուում սովորաբար հասարակութեամբ գործածվում է, չիյաեմ, իյնալ, մէյմէկ կամ մէյմը և սոցա նման բառեր։ Իյնալ՝ հայերէն անկանել բառի աղաւաղեալ ձևն, ինկնալ բառն է, չիյաեմ փոխանակում է չգիտեմ, մէյմէկ փոխ. մէկ մէկ։ Բայց ինչպէս է պատահել, որ այդ Կ տառը փոխվել է յ։ Տաճկերէնն է տալիս մեզ դորա մեկնութիւնը։ Տաճկայ նոր, կանոնաւորած լեզուն մի սովորութիւն ունի, որ Կ կամ ուղիղը Գ (g) հնչումը բուսնդակող տաճկական (բայց ոչ արաբ. և պարսկ.) բառերում, այդ Գ կամ Կ հնչումը, շատ հեղ և յայտնի տեղերում, փոխվում է Ց հնչման. այսպէս՝ արտասանվում է դիթդիյի փոխ. գիթդիգի, ինչպէս իրաք զրվում է. գէվրէք—գէվրէյին փոխ. գէվրէգին (սեռ. հոլով), գէդնէղ և գէդնիդին ըստ դրութեան, հնչվում են գէյնէգ գէյնէյին։ Այս տաճկական սովորութիւնը, թիւրքահայերը մոցել են և հայերէնում, փ ա փ կ ա ց ն ե լ ո վ մեր Կ տառը որ հնչում են իրը Գ (g) և դորանից հետևել են իյնալ, մէյմէկ և այլն *)։

Բայց երևի այս ապացոյցն վրէժն լուծելու համար է, որ մի տեղ էլ տաճկայ Ե (ɔ) հնչումը փոխել են Կ-ի (գ)։ Այսպէս տաճկական յայտնի է ο ր (ɔɔ) մասնիկը հայերէնում դարձուցել են կ ո ր (gor) կընեմ կոր, կուտաս կոր և այլն, որ որպէս բառին, նոյնպէս և իմաստիւ կատարեալ թիւրքական է։ Ա լ ը ե ο ր ը մ, այսինքն առնում եմ=կ ա ռ ն ե մ կ ո ր. ե ա փ ը ե ο ր ս ը ն, այսինքն շինում ես=կը շինես կոր... Ինչպէս օրինակներից էլ երևում է, ե ο ր կամ կ ո ր մասնիկը տաճկերէնի և տաճկահայոց աշխարհաբարի մէջ հաւասարապէս սահմանական ներկայ են շինում *)։

Այդքանը բաւական համարելով ապացուցանելու համար թէ տաճկական լեզուի յաճախ գործածութիւնը և չափից դուրս ընտանութիւնը մեծ այլայլութիւններ է մտցուցած տաճկահայոց հընչումների մէջ, մենք այժմ դառնում ենք քննել ըստ էական խնդիրը, թէ ինչ վերաբերութիւն ունի տաճկերէնի ազդեցութիւնը՝ խնդրոյ տակ ընկած բ, դ, գ, ձ և ջ տառերի հնչման այլայլութեան հետ։

Զ.

Թիւրքերէն լեզուն իր 32 տառերով միասին (որոնց 4-ը պարսկերէնից է առած և 28-ը արաբերէնից) անկարող է արտայայտել մեր կ, պ, տ, ճ հնչումները։ (Թողնենք ձ, ծ և ց, որ բոլորովին

*) Տաճկաստանի Կիլիկիան մասերը այդ Կ կամ Գ հընչման փափկացումը ծայրահեղութեան են հասցուցած, որով երբեմն բառերի իմաստի մէջ էլ տարբերութիւն է մնում. այսպէս փոխանակ ասելու գ ի թ գ ի մ (գնացի), ասում են կ ի թ գ ի մ (կորայ)։

*) Թէ իրաք տաճկահայոց կ ո ր ը—տաճկաց ե ο ր մասնիկն է, այդ հաստատած են թէ Վենետիկի Մխիթարեանք «Բաղմավէպի» մէջ և թէ Այդընեան վարդապետը իր Քննական Քերականութեան մէջ։

պահպանելու համար։ Եւ ո՞ւմ չէ պատահել տեսնել շատ երիտասարդների, որոնք միջոցների պակասութեան պատճառով կիսատ են թողել իրանց ուսումը։ Ո՞ւմ չէ պատահել տեսնել և այնպիսի ուսանողներ, որոնք հայրենիք վերադարձած՝ իրանց բոլոր ճիգը թափում են մի որ և է տեղից օգնութիւն ձեռք բերելու, որպէս զի շարունակեն իրանց ուսումը,—բայց մեծ մասամբ անօգուտ։ Գէտք է ղգալ, որ ճշմարիտ հեշտ բան չէ ամեն տեսակ նեղութիւններ կրելով հասնել երրորդ, չորրորդ կուրսը, և ապա դրամական միջոց չունենալու պատճառով, ստիպված թողնել ուսումը և կոտրած սրտով վերադառնալ՝ Պետերբուրգից, Մոսկվայից, Ժընէվից կամ Փարիզից։

Հասարակական օգնութեան ուրիշ աղբիւր չը կայ մեր ուսանող երիտասարդութեան համար։ Եւ ահա մինչ մի կողմից՝ բարձրագոյն ուսումնական ճգտողների թիւը մեծանում է, միւս կողմից մեր եղած ընկերութիւններն էլ իրանց օգնութիւնը մերժում են ուսանողներին։ Ինչու, ինչ պատճառով. արդեօք Մարդասիրական ընկերութիւնը աւելի լաւ նպատակների վրա պէտք է դործ դնի սրանից յետոյ իր փողերը։ Այդպիսի մի վճիռ մի ընկերութեան կողմից անսպասելի էր, մանաւանդ այն պատճառով, որ ընդհանրապէս մեր ժողովուրդը լինքը դեռ չէ սովորել սիրով և հոգատարութեամբ վերաբերվել դէպի իր նոր սերունդը.... Չէ որ այդ մի անհերքելի դառն իրողութիւն է....

Ո՞ւրեմն ինչ անել. ինչպէս օգնել կարօտ ուսանողներին,—ահա այն հարցը, որը անդադար կրկնվում է։ Պատահական ներկայացումներով, հանդանակութիւններով դրամական օգնութիւն չէ կարելի անել. անհատների մասնաւոր անձանց վրա յոյս դնել չէ կարելի։ Մարդ ակամայ ստիպված է ասել, որ հարկաւոր է հիմնել մի նոր ընկերութիւն, որի միակ նպատակը լինէր օգնել աղքատ ուսանողներին,—բայց, խոստովանենք ենք, մեր դոյութիւն ունեցող համարեա բոլոր ընկերութիւններն էլ ընդհանրապէս այնքան վատ են դրել իրանց, այնքան վատ են տանում իրանց դործերը, որ մարդ ամաչում է պնդել մի նոր ընկերութիւն հաստատելու հարցի վրա։ Մասաւորապէս ասելով մի չորս հինդ հազար դուսմար բաւական կը լինէր՝ ուսանողներին օգնելու բնի է բաւականութիւն տալ ուսանողների ամենածանր կարիքներին։ Արդ, ինչն ըստ ինքեան հարց է առաջ դալիս, միթէ յիրաւի այնպիսի մի դումարի ձեռք բերելը դժուար է մի այնպիսի ժողովրդի մէջ, որը ունի անմեղ ցանկութիւն օգնելու ուսանող չքաւոր երիտասարդներին։ Չենք կարծում։ Կովկասեան Բարեդործական ընկերութեան վարչութիւնը ոկզբունքով որոշել է, որանից յետոյ ունենալ՝ իր հաշուով, լիակատար ուսանող-որդեդիրներ. եթէ Բարեդործական ընկերութիւնը առանձին ուշադրութիւն կը դարձնի այս կարևոր խնդրի վրա, այն ժամանակ, անկասկած, նա կարող կը լինի իր եկող տարվայ նախահաշուի մէջ ուսանողներին օգնելու համար յատկացնել ոչ թէ 660 բուբլի, այլ մի երկու հազար բուբլի։ Բացի դրանից, եթէ դալ տարի Մարդասիրական ընկերութիւնն էլ աւելի ճշդութեան նայելով խնդրի վրա՝ կրոշի՝ ուսանողներին օգնել, այն ժամանակ նա էլ՝ հարկաւոր միջոցները ձեռք առնելով՝ կարող կը լինի այդ նպատակին յատկացնել մօտ մի երկու հազար բուբլի։ Այդպիսով երկու ընկերութիւնները՝ իրանց նախահաշուի մէջ մի չորս հազար բուբլի յատկացնելով ուսանողներին օգնելու գործին, ոչ թէ միայն մի շատ մեծ, դովելի և նպատակայարմար դործ կատարած կը լինեն, այլ և բարոյապէս կը տոկսին ժողովրդին աւելի համակրանքով վերաբերվել դէպի իրանց գործունէութիւնը և օգնել նրանց։ Այդպիսի մի բան կարող է անել և կանանց Բարեդործական ընկերութիւնը ուսանողուհիների վերաբերութեամբ։ Մեր ընկերութիւնները պէտք է չշափելի փաստերով ապացուցանեն ժողովրդին, որ իրանք դործ են կատարում։ Ուսանողներին օգնելու խնդիրը մի այնպիսի վառ խնդիր է ներկայանում, որ դա ամենայարմար միջոցը կը լինի ամեն մի ընկերութեան դործունէութեան կենդանի ապացոյց տալու համար։ Ուրեմն թող չտատին մեր ընկերութիւնները այդ կենդանի ապացոյցը տալ՝ օգնելով աղքատ ուսանող երիտասարդութեանը։

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Փետրվարի 19-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան արտակարգ նիստում, Իշխան Ջորջաձէ, ինչպէս հաղորդեցինք «Մշակի» անցեալ համարում, մի զեկուցում տուեց՝ այն միջոցների մասին, որը կառավարութիւնը ձեռք է առնում ռուսաց դինեղործութիւնը ծաղկեցնելու համար։ Իշխան Ջորջաձէ մանրակրկիտ է պետական կալուածների մինիստրութեան կից կազմված յանձնաժողովի պարապմունքներին, և տեղեակ է այդ հարցի մանրամասնութիւններին։ Դինեղործութիւնը կազմում է երկրի արդիւնաբերութեան մի շատ անդարդացած դրութեան մէջ է, բայց այնու ամենայնիւ մօտ 15 միլիոն մի դումար, որը մինչև այժմ ուղարկվում էր արտասահման դինի բերելու համար, այժմ մնում է Ռուսաստանում։ Կովկասը Ֆրանսիայի մեծութիւնն ունի, բայց նա արտադրում է միայն 10 միլիոն վեդրո դինի, իսկ Ֆրանսիան 300 միլիոն վեդրո։ Պետական մինիստրութեան կից կազմված յանձնաժողովի պարապմունքներից երևեցաւ, որ դինեղործութիւնը շատ ընկած դրութեան մէջ է մի քանի տեղերում, մանաւանդ Բեսարաբիայում։ Ղրիմում դինեղործութիւնը համեմատաբար լաւ դրութեան մէջ է։ Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասին, յանձնաժողովի մէջ այն կարծիքը յայտնվեցաւ, որ այդ երկիրը՝ դինեղործութեան կողմից շատ մեծ ապագայ ունի. նա կարող է դինի տալ ոչ միայն Ռուսաստանին, այլ և արտասահմանին։ Անդրկովկասում խաղողի և դինու կանոնաւոր մշակութիւն չը կայ։ Եւ դրա պատճառը հարկաւոր հմտութիւնների և պատրաստութեան բացակայութիւն է, որի առաջն առնելու համար հարկաւոր են դինեղործական բարձր դպրոցներ, զբաղեցնելու Բեսարաբիայում և Կովկասում։ Դպրոցների մօտ մատդրութիւն կայ հիմնել տալ մեծ պահեստներ։ Անդրկովկասում պէտք է հիմնվեն դինեղործների երկու դպրոց. մէկը՝ Ցինանդալից $1^1/_2$ վերստ հեռաւորութեան վրա Կիզլա-Խեվում,—իսկ միւսի տեղը առ այժմ յայտնի չէ։ Յանձնաժողովը ցանկութիւն յայտնեց որ գիւղական ուսումնարանների ուսուցիչները ևս ծանօթ լինեն դինեղործութեան հետ. դրա համար ամառվայ արձակուրդներին կը դումարվեն ուսուցչական ժողովներ, որտեղ ուսուցիչները կը ծանօթանան դինեղործութեան հետ։ Ուսումնարանների մօտ կահեցվեն խաղողի օրթեր։ Յանձնաժողովը ուշադրութեան է առել և դինին կեղծելու կարևոր հարցը։ Պէտք է յիշել և այն, որ դինեղործութեան տարրական դպրոցների հիմնելը հաստատութիւն չէ գտել յիշեալ յանձնաժողովի մէջ։

—

Բաղդասարեան պ. Գրիգոր Այվազեան նուիրել է «Մշակի» մի տարեկան օրինակ Պարսկաստանի ՐԷՇՏ քաղաքի հայոց դրադարանին։

—

Մեզ դրում են ԲԱԳՈՒԻՑ որ ծերունի Նիկողայոս Կրասիլնիկեանց չուշեցի, որ յայտնի էր իր առատաձեռնութեամբ, փետրվարի 18-ին վախճանվեցաւ, կտակելով այլ և այլ Բարեդործական նպատակներին հետևեալ դումարները։ Գանձասարի վանքին (որպէս ծննդատեղին) հանդուցեալը կտակեց 2,000 բուբլի, Տաթևի վանքին 1,500 բուբլի, Երուսաղէմի ս. Յակոբի վանքին 1,000 բ., Էջմիածնի ճեմարանին 1,500 բ., Բաղաբի Մարդասիրական ընկերութեանը 500 բ., որով պիտի մի որդեղիր պահվի, Բաղաբի Բերդի եկեղեցուս, որպէս նրա ժառանգ 500 բուբլի և իր խոստովանահօր, հայր Խորէնին 200 բուբլի։ Ասում են որ հանդուցեալը այլ բարեդործական նպատակներով էլ փողեր է կտակել, բայց Թղթակիցը դլխաւորներն է յիշել։

—

Մեզ դրում են ԱՐՄԱՒԻՐԻՑ որ 12-ին փետրվարի մեծ չքով կատարվել է այդտեղ Վարդանանց տօնը։ Պատարագից յետոյ դործակալ քահանան քարոզ ասեց և յորդորեց հասարակութեանը կարողութեան չափ հանդանակութիւն անել Արմաւիրի հայոց դպրոցի օգտին։ Այդ նպատակով անմիջապէս հաւաքվեցաւ 159 բուբլի 50 կոպէկ։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ դրում են։ «Ամիս 11-ին հայ թատերասէրների տուած ներկայացումից զուտ արդիւնք դոյացաւ 181 բուբլի 62 կոպ., որի կէսը տրվեցաւ թատերասէր խմբին, իսկ միւս կէսը յատկացվեցաւ յօդուտ Բաթումի հայոց ուսումնարանի և յանձնվեցաւ երեցփոխանին։ Նախընթաց ներկայացումից ուսումնարանի օգտին հասոյթ եղաւ 40 բուբլի։ Բարեկենդան օրերին Բաթումի երիտասարդները իրանց զուարճութեանց հետ չը ղլացան ժողովել յօդուտ ուսումնարանի 56 բուբլի, որ նոյնպէս յանձնվեցաւ ուսումնարանին։»

—

Ինչպէս մեզ դրում են ԲԱԹՈՒՄԻՑ, փետրվարի 21-ից, եղանակը այդտեղ շարունակվում է դեռ անձրևային լինել։ Թղթակիցն աւելացնում է. «Յունվարից մինչ օրս եղանակը դեռ չէ պարզված գոնէ մի շաբաթով։ Այսպիսի ձմեռ յիշում ենք միայն 7 տարի առաջ։ Վատ եղանակին առևտրական շարժողութիւնն էլ կիսով չափ կանգ է առնում միշտ։»

—

«Մշակի» № 20-ի մէջ լուր տպեցինք որ Պետերբուրգի պարսից նախկին դեսպանը նշանակվել է այժմ Արդաբիլի և Ղարադաղի նահանգապետ, բայց նրա անունը սխալ-էր տարված. փոխանակ Միրզա-Աստուր-խան պէտք է կարդալ՝ Միրզա-Աստուլա-խան։

—

Այս քանի օրերս ԹԻՖԼԻՍԻ քաղաքային փոխտատ արկղը սկսվելու է իր դործողութիւնները։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալ նկատողութիւնը. «Անդրկովկասի զանազան կողմերից, Երևանից, Շուշուց, Ագուլիսից և ուրիշ քաղաքներից Թիֆլիս եկած հայ վաճառականները շատ քիչ բացառութեամբ, մեծ մասամբ վերջին ժամանակներս սկսել են հաւաքվել միմեանց մօտ, փակվել սենեակներում, և թուղթ խաղալ, մինչև դիշերվայ ժամի երեքը, չորրը, շատ անգամ մինչև լոյս, և այն ևս բաւական մեծ դումարներով։ Ցաւալի է անկասկած, որ մեր վաճառականների մէջ մուտք է դործում այդ ՀԱՍԱԿԱՐ սովորութիւնը, որին նրանք դնում են թէ իրանց առողջութիւնը և թէ փողերը, չը նայած՝ որ օտարութեան մէջ ապրելով, ամեն տեսակ նեղութիւններ կրելով, շատ օգտաւէտ բաներից զուրկ մնալով՝ նրանք կոպէկ-կոպէկ փող են ուղում աշխատել։ Դուցէ մասամբ այդ հետևանք է այն բանի, որ այժմ Թիֆլիսում չը կան օգտաւէտ զուարճութեան մատչելի տեղեր, որտեղ մեր վաճառականները կարող լինէին ուրախ և արդիւնաւոր կերպով անցկացնել իրանց պարապ ժամերը,—բայց այդ դեռ ևս չէ նշանակում թէ պէտք է՝ ամեն

օտար են նորան)։ Նա ունի, ք, փ, թ, չ և դ, բ, ղ, ջ (ռուսահայոց հնչման համեմատ) բայց չունի, ինչպէս վերև յիշեցինք, հայոց կ, պ, տ և ճ արտասանութիւնը տպաւորող տառեր։

Եւ տաճկահայերի մեծամասնութիւնը, որ ինչպէս վերև յիշեցինք մինչև վերջին քառորդ դարը կատարելապէս ընկղմած էր թիւրքերէնի մէջ և որն որ օրօրոցից սկսած թիւրքերէն էր խօսում և թիւրքերէն լսում, բնականաբար պէտք է հպատակեցնէին իրանց մերթ ընդ մերթ խօսած դրած մայրենու լեզուի հնչումները տիրող լեզուի հընչման, այդ անիսասփելի էր, որն և երևաց մեր վերև առաջբերած օրինակներից։ Արդ եթէ տիրող և մայրենւոյ կարդն անցած օտար լեզուն չունի կ, պ, տ հնչումները, կարելի էր արդեօք անվախտ պահպանել այդ տառերի նախնական, բուն հընչումը։ Այդ տառերը կամ պէտք է հնչվէին ք, փ, թ, և կամ բ, դ, դ. թիւրքերէնը միջին ճանապարհ չէ ընդունում։ Բայց այժմ հարց. ինչու համար այդ Կ, Պ և Տ տառերը անցան մեր Բ, Դ և Դ տառերի տեղ։ Ուղիղ և որոշակի պատասխան տալն այս հարցման դժուար է։ Վատ դի ժողովրդական լեզուն՝ մանաւանդ մի ազգի, որ անընդհատ գտնվել է օտարի տիրող ազդեցութեան ներքև, իր կրած այլայլումներին մէջ որոշ սահմանով և հաստատուն դրութեամբ չէ առաջնորդվում։ Խլող դերն այդ խնդրում կատարում են այնպիսի հանդամանքներ, որոնց՝ մանրակրկիտ հետազօտութիւնը մինչև անդամ դժուար կարող է լուսաբանել։ Եւ եթէ, ըստ այդմ, չը կարողանանք մի որոշ կանոնով սահմանել եղած այլայլութիւնը, դէթ բաւական հաւանական մի պատճառ այդ հարցի լուծումն անկարելի չէ անում։ Ցառական ալփաբետը 9 տառ ունի, որոնք արաբական կոչմամբ անուանվում են հուրուֆը սաֆիլէ (حروف سفيله) այսինքն ծանր կամ թանձր դրեր։ Դորա են՝ շ (h), ջ (kh), ս (s) զ (z կամ d) ե (u), ե (z), է (a և այլն, ըստ ձայնաւոր նշանի) ջ (g կամ gh) և ց (cc)։ Այդ տառերից ս, զ, ե, ե և ց ունեն իրանց համահնչիւն ուրիշ տառեր, ինչպէս Հ և Ս (s), ֆ և Զ (z), Տ (t) և Կ (k կամ c)։ Ցիշեալ թանձր տառերից ամենից աւելի գործածականներն և կարևորներն են ե որ ունի թանձրը Թ-ի հնչումն և ց, որ ունի թանձր Ռ-ի հնչումը։ Այդ երկու կարևորագոյն հնչումներն. ինչպէս պէտք է արտասանէին տաճկահայը հայկական տառադարձութեամբ։ Դոցա յանախակի գործածութիւնն այդ հնչումները տպաւորած է հայոց մէջ ևս ի՛նչպէս սեփական աղդային հնչման։ Եւ ահա գոհացում տալու համար այդ պահանջման, դոցա փոխանակ դրված են մեր Տ և Դ տառերը։ Բայէք տաճկերէնի ուսման ծառայող ձեռնարկներն, որ չինված են թիւրքահայերից և դուք կը գտնէք այդ Տ և Դ տառերը շարունակ դրված տաճկական թանձր ե (թ) և ց (ք) դրերի դիմաց։ Այդպէս է աւանդվում բոլոր տաճկահայոց ուսումնարաններում։ Ե տառի փոխարէն Թ, և ե տառի փոխարէն Դ (իբրև կրկին կամ թանձր Թ)։ Ռ տառի փոխարէն Փ և ց տառի դիմաց Դ (իբրև թանձր Փ)։ Երբ տաճկայ այդ երկու թանձր տառերի շնորհիւ մեր Դ և Դ փոխեցին այսինքն թանձրացուցին իրանց հնչումն, անբնական չէր, որ մեր միւս միջակ տառերն ևս, ինչպէս Բ, Ջ և Ձ հետևէին իրանց դասակից ընկերների օրինակին։ Վատ դի մի և նոյն կարդի տառերից եթէ երկուսը անհրաժեշտ այլայլութիւն ստացան—չէր կարելի, որ միւսները պահէին իրանց բնական հնչումը, մնալով մի և նոյն կարդում։ Ահա այդպիսով, մեր միջին կամ միջակ տառերը՝ Դ և Դ տառերի նախաձեռնութեամբ՝ ենթարկված են տաճկայ թանձր տառերին։ Սա՝ իրերի ներկայ վիճակն է տաճկահայոց արտասանութեան մէջ։ Բայց այդ դրութիւնը չէ առաջացած և չէր կարողանայ առաջ դալ միաժամանակ կամ միանդամից։ Պէտք է ենթադրել, որ նոյն իսկ Դ և Դ, որ այժմ բոլորովին տաճկացած են, սկիզբներում չէին հնչվում այն ճշտութեամբ, ինչպէս պահվում է այսօր, այլ դա պատահած է տարիների, մինչև իսկ դարերի ընթացքում, քայլ առ քայլ հետևելով այն օտար ազդեցութեան, որ երթալով ծանրանում էր, կամ ինչպէս կարծում են տաճկահայերը, փափկացնում էր կոշտ բառերը (նոքա որոնք բ, դ, դ...ով են դրված) *)։

Հայկական տառերի հնչման այդ սիստեմատիկան այլայլումը տաճկահայոց մէջ կատարված է փոքր առ փոքր, անդդուշաբար և դորա տարածվելուն համար էլ այնքան ժամանակ է պահանջված, որ այդ յեղաշրջումը դեռ ևս իր ընթացքը մինչև իսկ վերջացուցած էլ չէ, ինչպէս պիտի տեսնել ընթերցողը մեր յօդուածի շարունակութեան մէջ։ Եւ այդ մասին մեր տված պատճառը դուցէ ոմանք պարզ hypotése-ի սահմաններից դուրս չը հանեն, սակայն, մեր վերև յառաջ բերածներից դատ, այստեղ կը յիշենք և մի քանի այլ, կարևորագոյն դէպքեր և օրինակներ, որոնք թէ այդ պատճառին ոյժ պիտի տան և թէ զօրացնեն տարակայսներն թէ տաճկահայոց ներկայ հնչումները ի նախնեաց են աւանդված։

(Կը շարունակվի)

---

*) Տաճկահայ դրադետաց մեծ մասը, որքան մենք լսել ենք, խոստովանում է թէ այդ ռուսահայերից տարբեր հնչումը՝ միայն փափկացման հետևանք է և թէ նոքա բարձր բառը հնչելով փարցը, կամ գունդ բառը հնչելով քունթ այդ բառերի արտասանութիւնը փափկացուցել են։ Եւ այդ արել են «փարը և ի չնորհս» այս անդամ ոչ թէ թարգմանչաց, այլ թիւրքերէնի... Եւ ինչու չանէին, ըստ որում «տաճկական ոգով չնչած, մնած, մէկումը գարմանք չէ, որ, ատիկայ բնակատն ըլայ և անոյշ գայ» ասում է Այտընեան, շատ իրաւամբ, իսկ դորա հակառակ, աւելացնում ենք մենք, գունդ (gound) և համանման հնչումն անախորժ երևայ. չէ՞ որ ça choque l'oreil...

բան մոռանալ և ամբողջ ղեկերները թղթախաղով անցկացնել, որը չատ անգամ ունենում է ամենաանախորժ հետևանքներ։»

—

Տեղական ռուս լրագիրները լուր են հաղորդել որ Թիֆլիսի Ալէքսանդրեան այգու և ստորին մասը, որ կից է Միքայէլեան կամուրջին, շուտով ոչնչացած կը լինի և այդտեղ կը կառուցվի ինստիտուտեան անդամ չլինելիությունը։ Այդպիսով Թիֆլիսում շուտով այլ ևս ոչ մի այգի չի մնայ։

—

Երեքշաբթի, 24-ին փետրվարի, նշանաւոր ռուս պիանիստուհի տիկին Եսիպովա տուեց իր առաջին կօնցէրտը։ Թատրոնը լի էր և անտարակուսում հասարակութիւնը արդէն առնում էր տոմսակներ չնորհալի տիկնոջ երկրորդ կօնցէրտի համար, որ լինելու է վաղը, ուրբաթ օր, փետրվարի 27-ին։ Պէտք է խոստովանվել որ բացի Սօֆիա Մէնտէլից Թիֆլիսցիներին դեռ չէ պատահել լսել տ. Եսիպովայի պէս առաջնակարգ ածողին. նրա ձեռքերի տեխնիկան հրաշալի է, նրա կատարման ճշգրտությունը անմեմն է։ Թէև տիկինը յայտնի է գլխաւորապէս որպէս Շոպէնի գրուածների կատարող, որի վրա և շեշտեց «Кавказъ» լրագրում տպված իր յօդուածում մեր քաղաքի ծերունի երաժիշտ-վարժապետ պ. Եպշտայն, բայց փետրվարի 24-ի կօնցէրտում տիկին Եսիպովա, մեր կարծիքով, ամենից լաւ ածեց Բեթօվենի «Sonate appasionata»։ Շնորհալի կերպով կատարվեցան նոյնպէս Պադերեվսկու «Menuet» և Լէշետիցկու «Alouettes» պիէսաները։ Լիստի «Rhapsodie» յայտնի պիէսայի կատարման ժամանակ մենք կարողացանք համոզվել որքան այժ և արտայայտութիւն ունի տիկին Եսիպովայի ածելը։ Սակայն պիանոի վրա ածող կինը, ինչքան էլ տաղանդ ու տեխնիկական զարգացում ունեցայ, երբէք չէ կարող աղամարդու չափ ինքնուրոյնութիւն և անհատականութիւն ցոյց տալ իր երաժշտական կատարման մէջ։ Ամենատաղանդաւոր, ամենահանճարեղ կինը միշտ աւելի կրտրական է, քան թէ աղամարդը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ քանդակագործ Բեռնշտամ պատրաստում է Նարերումս մեռած ռուսաց բանաստեղծ երիտասարդ Նադսոնի մարմարեայ կիսարձանը։ Նադսոն թողել է չատ բանաստեղծական գրուածներ, որոնք մինչև այժմ լոյս չեն տեսել։ Մտադրութիւն կայ հրատարակել այդ գրուածները։

—

Թիֆլիսի դումայի փետրվարի 23-ի նիստում հարց յարուցվեցաւ մնացորդ դումարներից նիւթական միանուագ օժանդակութիւն տալ քաղաքային ինքնավարութեան մէջ վարձով ծառայողներին։ Այդ առաջարկը մերժվեցաւ, և վճռվեցաւ սպասել, մինչև որ ֆինանսական յանձնաժողովը կը ներկայացնի իր զեկուցումը քաղաքային վարչութեան դրամական գործերի մասին։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը կը կայանայ փետրվարի 27-ին, ուրբաթ օր, երեկոյեան 7½ ժամին։ Հերթական գործերը վերջացնելուց յետոյ, ժողովը կը լսի պ. Լերիսեի «Հաշիւը 1887 թվի շերամապահութեան մասին» և պ. Դինգելշտեդտի զեկուցումը, որը վերաբերում է «Թէյի մշակութեանը արևելեան Հնդկաստանում» և Անդրկովկասում թէյի մշակութեան կարելիութեանը։ Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱՅԻ ԱՅԺՄԵԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆԸ

—

Վերջին թէ հեռագրական և թէ լրագրական տեղեկութիւններից երևում է, որ բոլգարական հարցը այժմ մի այլ կերպարանք է ընդունում։ Թիւրքիայի միջամտութիւնը այլ ևս չը կայ. ուրեմն Պոլիսը խաղաղութիւն չէ կարող աւանել Սոֆիային։ Բ. Դուռը արդէն կորցրել իր բոլոր յարաբերութիւնները Ցանկովի հետ և, ինչպէս երևում է, անցնում է իսմամակալութեան կողմը։ Թէ ինչ դիրք կը բռնի վերջնականապէս Ցանկով, առ այժմ յայտնի չէ, թէև նա մի քանի ժամանակ առաջ զիջողութիւններ անելու տրամադրութիւններ ցոյց տուեց և մինչև իսկ Պոլսում յետ կացաւ իր առաջվայ մի քանի պահանջներից։ Գրեկով և Կալչեվ արդէն հեռացան Պոլսից և Սոֆիա գնացին։ Սոֆիա է ուղարկվել և Բիդա-բէյ Բ. Դրան կողմից։ Խնամակալութիւնը չարունակում է ընթանալ իր առաջվայ ուղղութեամբ, Ստամբուլով և Մոսկուրով չատ ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս ընդդիմադրական կուսակցութիւններին։ Սոֆիայում կամենում են մարտին նորից դումարել ազգային մեծ ժողովը. եթէ ժողովը անկարող եղաւ ընտրել նոր իշխան, պէտք է նորից հաստատել խնամակալութեան լիազորութիւնը։ Այդ բոլորի հետ խնամակալութեան դէմ մի քանի քաղաքներում երևան են գալիս ապստամբական շարժումներ։ Ապստամբութիւնը սկսվել է Վարնայից և Շումլայից։ Թէ որքան զօրեղ և պատրաստված է այդ ապստամբական շարժումը, այժմ դեռ յայտնի չէ. յայտնի է միայն, որ ապստամբութեան գլուխը անցել են մեծ մասամբ աքսորված սպաները, և արդէն Բուչչուկումն էլ ցոյցեր են անում խնամակալութեան դէմ։ Այդպիսով ուրեմն Բոլգարիայում սկսվում են ներքին խառնակութիւններ։ Այդ շարժումները ճնշելու համար կառավարութիւնը զորք է դուրս բերել, ինչպէս երևում է վերջին հեռագիրներից, ապստամբները ճնշվում են։ Կուսակցական կրքերը աւելի լարվելու նոր առիթներ ունեն։ Այդ տեսակէտից նայելով հարցի վրա, դուցէ ճիշտ լինի և այն լուրը, որ Կարավելովի և Ցանկովի կուսակցութիւնը աշխատում են իրանց մէջ համաձայնութիւն կայացնել՝ ընդհանուր ոյժով կռուելու խնամակալութեան և այժմեան մինիստրութեան դէմ։ Ինչպէս երևում է զանազան կուսակցութիւններից խառն կառավարութիւն կազմելու հարցը այժմ բոլորովին անուշադրութեան կը տրվի, քանի որ ապստամբութիւնները հաշտութեան յոյսերը բոլորովին ի դերև են հանում։ Ինչպէս երևում է լրագրական տեղեկութիւններից, բոլգարական պատգամաւորներն էլ, Պոլսից իրանց հեռանալուց առաջ, յայտնելով իրանց խորին յարգանքը Սուլթանին, այն համոզմունքն են յայտնել, որ բոլոր կուսակցութիւններից խառն կառավարութիւն կազմելու միտքը անիրագործելի է այժմ, և միայն իշխանի ընտրութիւնը կարող է դուցէ վերջ տալ այժմեան խառնաչփոթութիւններին։ Սակայն խնդիրը նրա մէջն է, որ այժմեան դրութեան մէջ, երբ խնամակալութիւնը սկսում է իր ծրագրի վրա, երբ ընդդիմադրական կուսակցութիւնն էլ ունի իր նախագիծը, և երբ, վերջապէս, ռուսաց կառավարութիւնը միշտ յիշեցնում է բոլգարական կառավարութեանը իր հաստատ պահանջները,—այդպիսի դրութեան մէջ իշխանի ընտրութիւնը մի չատ բարդ խնդրի կերպարանք է ներկայացնում։ Մընում է սպասել, թէ ինչ կերպով կը նայեն այժմ մեծ պետութիւնները բոլգարական խնդրի նոր շրջանի վրա։ Իսկ դրա համար պէտք է սպասել, որ իշխան Բիսմարկ՝ վերջապէս իր հաշիւները տեսնէ նոր բէյլստադում, և ապա արտաքին քաղաքականութեան գործը ձեռք առնի։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Քաղաքական հորիզոնը,—ասենք քաղաքացիական ոճով,—ծածկվում է մութ ամպերով։ Քաղաքական շրջաններից եկող տեղեկութիւնները աւելի և աւելի կասկածելի են դարձնում մօտիկ ապագան։ Աւելի քան երկու ամիս է, որ պետութիւնները իրանց պարլամենտների, բէյլստագների, բէյլսրատների և զանազան ժողովների միջոցով խաղաղասիրական բարի ցանկութիւններ են յայտնում,—բայց այդ բոլորը միայն խօսք է մընում։ Բիսմարկի օրինագիծը չուտով կը պակվի աջողութեան պակներով,—բայց հէնց դրանով երկաթէ կանցլերի ապագայ գերիշխանութիւնը աւելի վտանգաւոր կերպարանք է ցոյց տալիս։ Գերմանիան կրկին անգամ իր ձեռքն է առնում միջազգային քաղաքական կօնցերտի նուագապետի պաշտօնը,—և ահա նորից հեռագիրը լուր է բերում զանազան դաշնակցութիւնների մասին, և այն էլ պատերազմական դաշնակցութիւնների։ Յարաբերութիւնները լարվել են. Աւստրօ-Ունգարիան առանց ծածկելու պատերազմի է պատրաստվում. Բալկանեան թերակղզու վրա՝ ամենայն րոպէ կարող է սկսվել արիւնհեղութիւն և ընդհանուր շարժում։ Իտալիան մի քաղաքական փոթորիկ է յուզում իր կրոցրած երկիրները կրկին ձեռք բերելու համար, մանաւանդ որ Բիսմարկ նրան յոյսեր է տալիս. փետրվարի 24-ից Հռոմից մեր ստացած հեռագիրը, որը տպված է ներկայ համարում, ապացուցանում է այդ միտքը, որը գուցէ չուտով առաջ կը բերի դաշնակցութիւն Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի մէջ։ Այդ դաշնակցութիւնը էլէկտրական ազդեցութիւն կը գործի եւրոպական քաղաքականութեան վրա. Ֆրանսիան վաղուց գիտէ, որ Գերմանիայի դաշնակցութեան ամենաուժգեղ ծայրը դէպի իրան է ուղղած։ Այդպիսի դրութեան մէջ, զարմանալի չէ, որ յուզմունքը բազմապատկվում է ամեն կողմերում, փետրվարի 24-ին Պետերբուրգի բօրսայում մուրհակների կուրսերը ընկնում են. քաղաքական շարժումներ են լինում Աւստրիստանում, Զինական Թաթարիստանում, Հնդկաստանի հիւսիսային սահմանների վրա,—և այդ բոլորի մէջ՝ ի հարկէ Անգլիան չէ կարող չը միջամտել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ իբր թէ Սոֆիայում պատրաստութիւններ են տեսնում՝ իշխան Բատտենբերգին նորից իշխան հռչակելու։ Այդ լուրի որ աստիճանի ճիշդ լինելու մասին հաստատապէս ոչինչ չէ կարելի ասել։

—Աւստրօ-Ունգարիան պատերազմի կատարեալ պատրաստութիւններ է տեսնում։ Աւստրիան և Ունգարական պատգամաւորների ժողովները միաձայն, և առանց մի խօսք ասելու հաստատեցին պատերազմական ծախքերի համար պահանջվող միլիոնների փոխառութիւնը։ Դա մի զօրեղ ցոյց է։ Մի և նոյն ժամանակ մինիստր Տիսսա յոյս է յայտնում, որ հարկաւոր ժամանակը բոլորը ոտի կը կանգնեն հայրենիքի պաշտպանութեան համար։ Առհասարակ Աւստրօ-Ունգարիայից եկող վերջին լուրերը շատ յուզիչ են։

—Իշխան Բիսմարկ յոյս էր տածում, որ Իտալիան կը միանայ աւստրօ-գերմանական դաշնակցութեանը. բայց վերջին դէպքերը, և մանաւանդ Պապի և Բիսմարկի յարաբերութիւնները աւելի զրգռեցին այն թշնամական զգացմունքները, որ իտալական ազգը ունի դէպի Աւստրիան ընդհանրապէս։ Դժուար թէ մինիստր Բրիլանի ցանկութիւնները իրագործվեն՝ Աւստրիայի հետ բարեկամանալու վերաբերութեամբ։

—Գերմանական կառավարութիւնը արդէնից Էլզաս-Լոտարինգիայում զանազան ընկերութիւնների հիմնելը։

—Հռոմի պապի և Բիսմարկի բարեկամութիւնը օրից օր ամրապնդվում է. այս օրերս սպասվում է պապի հրաւէրը, որով նա առաջարկելու է Գերմանիայի կաթոլիկներին հեռու մնալ սոցիալ-դեմոկրատների կուսակցութիւնից։ Բիսմարկ իր քաղաքականութեան համար զօրեղ հակառակորդ է համարում սոցիալ-դեմոկրատներին, և նոցա ոյժը թուլացնելու համար նա դիմում է դարձեալ պապի օգնութեանը։

—Աւստրիական զինուորական արհեստանոցներում և զինարաններում անընկարագրելի եռանդով աշխատում են, և այդ աշխատանքները չեն դադարում նոյն իսկ կիրակի օրերը։

—Եւրոպական լրագիրների խօսքերին նայելով, Աֆղանստանի էմիրը՝ պատերազմական ծախսերի համար նոր տուրքեր է հաւաքում։

—Զինուորական օրինագծի քննութիւնը արդէն սկսվեցաւ դերմանական նոր բէյլստագի մէջ։ Արդէն յայտնի է թէ ինչ վախճան կունենայ սեպտենատի հարցը,—բայց ուշադրութեան արժանին այն է, որ Եւրոպան առանց ուշադրութիւն դարձնելու դիպլոմատիական լուրերին՝ կատաղաբար սպառազինվում է։ Եւրոպական մամուլը այդ բոլորը՝ ի նկատի առնելով հարցնում է, թէ ուր մնացին Բիսմարկի խօսքերը, թէ «սեպտենատը—այդ խաղաղութիւն է։»

—Փոքրիկ Զերնօգորիան պատերազմական պատրաստութիւններ է տեսնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագրում մէջ սկսել է զործադրվել մի վնասակար սովորութիւն. լրի կանայք զանազան դեղերն խմում՝ վիժելու համար, և մեռնում են։ Քրնոմութիւններից երևում է, որ այդպիսի կանայք մեծ մասամբ դործ են դնում «Թէմպէլիի ջուր»։

* * *

Իտալական թագուհի Մարգարիտան փորձում է այժմ վէպիկներ գրել և դիտաւորութիւն ունէր արդէն հրատարակելու այդ վէպիկները։ Նորերումս օտարազգի մի դեսպան Հռոմի թագաւորական պալատում ընդունված ժամանակ դիտում է թագուհուն և ասում է. «Զերդ մեծութիւն, որքան հիասթափվեցանք մենք ամենքս, երբ իմացանք որ դուք փոխել էք ձեր դիտաւորութիւնը և այլ ևս չէք ուզում լոյս ընծայել ձեր գրած վէպիկները»։

—Ես կարծեմ որ դուք աւելի կը հիասթափվէք, եթէ վէպիկներս հրատարակվէին, պատասխանում է ժպտալով թագուհին։

—Ինչի։

—Որովհետև ես այժմ համոզվեցայ որ գրելու տաղանդ չունեմ և ահա ինչպէս ես այդ իմացայ։ Փորձելու համար թէ ինչ գեղարուեստական արժէք ունեն ոչ թէ թագուհու, այլ մասնաւոր անհատի գրածները, ես վէպիկներս մինը կնոջ անուան ստորագրութեամբ ուղարկեցի մեր ամենալաւ գրողներից և խմբագիրներից մինին,—և քանի մի օրից յետոյ լրագրի պատասխաններում կարդացի հետևեալ պատասխանը՝ «զգեցինք գամբիւղը»։ Այժմ, աւելացրեց թագուհին, ես հաշտվեցի արդէն իմ վիճակիս հետ՝ լինել միայն թագուհի և ձեռք վերցնել հեղինակ լինելու փառքից։

* * *

Նորերումս Խարկովում, պարահանդէսի ժամանակ մեռաւ մի ջահիլ օրիորդ։ Մահուան պատճառը, ինչպէս հաստատեցին բժիշկները, սրտի պայթումն է եղել, որ առաջ է եկել չատ սեղմած կօրսէտից։

* * *

Հռոմում, վերջին օրերս պալատի մէջ տեղի ունեցած մի պարահանդիսի ժամանակ, Հումբերտ թագաւորը հարցրեց՝ իրան ներկայացրած մի լրագրական բեպօրտեորին, թէ ինչն է նրան ամենից չատ դժուարութիւն պատճառում նկարագրութեան ժամանակ։

—Հագուստների նկարագրութիւնը, ասեց նա։ Թագաւորը թէև թեի տուած բեպօրտեորին տարաբ թագուհու մօտ և ասեց նրան. «դու լրագրութեանը մեծ օգնութիւն արած կը լինես, եթէ նկարագրես մի քանի աչքի ընկնող հագուստներ։» Թագուհին ուրախութեամբ համաձայնեց, և մի քանի նկարագրութիւն թելադրելուց յետոյ ասեց բեպօրտեորին. «մի մոռանաք իմ մարգարիտները զարդարանքները միշտ հետաքրքրում են ընթերցողուհիներին։»

* * *

Ամերիկայում, Վիսկոնզին, որտեղ կանայք կատարում են և երդուեալ դատաւորների պաշտօնը, նորերումս պատահեց հետաքրքիր դէպքը. մի մարդ դատարանում գործը տանուլ տուեց, և դատարանին խնդիր ներկայացրեց վճիռը փոխելու համար։ Իր այդ պահանջը խնդրատուն պատճառաբանում էր նրանով, որ երդուեալների խորհրդի ժամանակ, խորհրդարանում, երդուեալներից մէկը «լոյս աշխարհ» բերեց մի նոր քաղաքացի. —իսկ օրէնքը արգելում է այդպիսի խորհրդարանում տան և երրորդ անձի ներկայութիւնը....

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 փետրվարի։ Այսօր փոխադարձ հողային կրեդիտի ընկերութեան փոխառուների ընդհանուր ժողովը որոշեց ընտրել մի պատգամաւորութիւն՝ ֆինանսների մինիստրին բերանացի բացատրութիւններ տալու ընկերութեան գործերի համար։ Պատգամաւորութեան անդամներ ընտրվեցան՝ Սամարին, իշխան Մեշչերսկի, Մինխ, Զվեգինցև, Պլանիցին, Բալամօվ և Շէնշին։ Պատգամաւորութիւնը կը ներկայանայ մինիստրին վաղը։

ՍՕՖԻԱ, 23 փետրվարի։ Պաշտօնական յայտարարութիւններին նայելով, ութ բոլգարացի սպաներ, որոնց պատերազմական դատարանը դատապարտեց մահվան պատժի, արդէն հրացանի են առնված Բուչչուկում, այսօր առաւօտեան 8 ժամին։ Ռուսահպատակ Վոլման, որը նոյպէս մահվան էր դատապարտված, ուղարկված է գերմանական հիւպատոսարանը։ Այսօր, դատարանի վճիռը գործադրելուց յետոյ, գերմանական հիւպատոսը ուղարկեց բոլգարական կառավարութեանը մի յայտագիր, որի մէջ յայտնում է, թէ Բուխարեստի ռուսաց ներկայացուցիչ պ. Խիտրովից ստացած տեղեկութիւններից երևում է, որ եօթն ձերբակալված սպաները,—որոնցից երկուսը՝ Ուղունով և Պանով արդէն մահվան պատժի են ենթարկված,—ռուսահպատակներ են, ուստի նա, հիւպատոսը, պահանջում է, որ նրանց հետ վարվեն ինչպէս այդպիսիների հետ։ Բոլգարական կառավարութիւնը պատասխանեց, որ ՝ի բաց առեալ կապիտան Վոլմանից, միւսները դատապարտված են իբրև բոլգարական հպատակներ, և իրանք խոստովանվեցին դատաստանի ժամանակ, որ պատկանում են բոլգարական ազգութեանը։ Միւս դատապարտվածներին, թէ զինուորականներին և թէ քաղաքացիներին, ինչպէս երևում է, կառավարութիւնը մտադիր է ներումն շընորհել։ Այն լուրը, որ իբրև թէ Տիրնովոյում ապստամբութիւն է առաջ եկել՝ հիմք չունի։ Սոֆիա-

յում տարածված են շատ սուտ լուրեր, որոնք տարածվել են աւելի յուզմունքների ազդեցութեան՝ քան թէ չարակամութեան շնորհիւ։

ԺՈՒՐԺԵՎՈ, 23 փետրվարի։ «Հավասի Գործակալութեան հեռագիր. «Մահուան պատժի բոլոր ենթարկվածները 13 հոգի են, որոց թւում՝ 2 մայոր, 2 կապիտան, 2 պօրուչիկ, և երկու էլ քաղաքացիական կոչում ունեցողներ։ Սոֆիայում ձերբակալված են 24 մարդ, իսկ Բուրգասում 8 հոգի։ Բացի դրանցից Ֆիլիպօպօլում ձերբակալված և արձակված են մի քանի սպաներ։ Սոֆիայում տիրում է սարսափ։ Տեղական միլիցիան, որի վրա բոլգարական կառավարութիւնը սկսեց կասկածով նայել, զինաթափ է եղած։ Ձերբակալվածների հետ վարվում էին շատ խստօրէն։

ՍՈՖԻԱ, 23 փետրվարի։ Շուտով կը գումարվի ազգային ժողովը։

ԲԵՐԼԻՆ, 23 փետրվարի։ Ռեյխստագը վերջացրեց սեպտենատի օրէնքի առաջին ընթերցումը. երկրորդ ընթերցումը կը մնայ վակատար նստի մէջ։ Պատերազմական մինիստրը խորհուրդ տուեց շատ ձայն տալ օրէնքի օգտին։

ՊԵՇՏ, 23 փետրվարի։ Պատերազմական փոխատուութեան վերաբերեալ օրինագիծն ընդունելուց յետոյ, պատգամաւորների ժողովը փակվեցաւ։

ՐՈՒՇԶՈՒԿ, 24 փետրվարի։ Կառավարութեան հաւատացնելով, ամբողջ Բոլգարիայում վերականգնեցրած է խաղաղութիւն։ Անու ամենայնիւ այստեղ ձեռք են առնվում նախազգուշութեան մեծ միջոցներ. տեղի են ունենում բազմաթիւ ձերբակալութիւններ. ինչպէս երևում է, երկիւղ են կրում նոր ապստամբութիւնից։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 24 փետրվարի։ Ֆրանսիական ուղղութիւն ունեցող մարմնամարզական և խմբերգական ընկերութիւնները խափանվեցան տեղական իշխանութեան կարգադրութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 24 փետրվարի։ Համայնքների ժողովին հաղորդված է, որ Վօլֆի միսիան՝ Եգիպտոսի վերաբերութեամբ՝ կատարեալ յաջողութեան մեծ շանսեր ունի, որ նրա առաջարկութիւնները ոչ միայն դիմադրութեան չը հանդիպեցան, այլ և աջակցութիւն գտան մի քանիների կողմից, և որ Անգլիան մտադիր չէ յետ քաշվել Եգիպտոսից՝ մինչև որ այնտեղ կը հաստատվի կանոնաւոր դրութիւն։

Կ. ՊՕԼԻՍ, 24 փետրվարի։ Բիզա-բէյ խորհուրդ տուեց խնամակալներին գործ չը դնել մահուան պատիժները մինչև նոր իշխանի ընտրութիւնը։ Պօլսի ռուսաց դեսպանը պնդում էր, որ հրամանագրվի Բիզա-բէյին՝ այցելել դերեալներին հիւպատոսների ընկերակցութեամբ։ Գերմանական հիւպատոսը պաշտպանում էր այդ առաջարկութիւնը։

ՀՌՕՄ, 24 փետրվարի։ «Տրիբունա» լրագիրը հաւատացնում է, որ իբրև թէ Իտալիայի, Աւստրիայի և Գերմանիայի մէջ կապված է պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւնը, որի զօրութեամբ՝ Իտալիան պարտաւորվում է օգնել Աւստրիային Ռուսաստանի դէմ, իտալական ցիրուլը իրան զինանելու փոխարէն, իսկ Գերմանիային՝ Ֆրանսիայի դէմ, Տունիսը և Կոնստանտինան գրաւելու փոխարէն։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 24 փետրվարի։ Բոլգարական կառավարիչները պահանջեցին Ռումինիայից՝ որ նա իրանց յանձնէ բոլգարական պանդխտականներին։ Ռումինիան հրաժարվեց. բայց Բենդերովին և Թէօդորովին պարտաւորեցրին ապնիւ խօսք տալ՝ չը հեռանալ Բուխարեստից, առանց տեղեկութիւն տալու ոստիկանութեանը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 24-ին

Ռուսաց 1 բուբլ.	Լօնդոնի վրա արժէ		$21^5/_{32}$	պէնս.
— —	Համբուրգի վրա	—	$179^5/_8$	պֆ.
— —	Փարիզի վրա	—	$223^5/_8$	սան.
Ոսկի —	արժէ	— —	9 › 30	կ.
Մաքսային կուպօններ	—	. .	179 › 50	›
Արծաթ —	—	— . . .	1 › 41	›
Բօրսային դիսկօնտներ	—	. .	5 և $6^1/_2$%	›
Պետական. բանկ. 5% տոմս	1-ին չրջանի		99 › 75	›
— — — —	2-րդ	—	99 › 37	›
— — — —	3-րդ	—	99 › 12	›
— — — —	4-րդ	—	99 › —	›
— — — —	5-րդ	—	99 › 12	›
— — — —	6-րդ	—	— › —	›
Արևելեան 5% փոխառութ.	1-ին չրջ.		98 › 82	›
— —	2-րդ	—	99 › 12	›
— —	3-րդ	—	99 › —	›
Նկլքին 5% առաջին փոխառութ.			244 › 50	›
— երկրորդ		—	238 › 50	›
$5^1/_2$% լէնտա			103 › 25	›
Ռակեայ լէնտա			189 › 50	›
Նոր կօնսօլիդած փոխառութիւն. .			162 › —	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.			158 › 87	›
$5^1/_2$% գրաւական թղթեր խերսոնի կալուած. բանկի.			97 › 25	›
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.			102 › 50	›
— — Պօլտավայի	—	—	101 › 37	›
— — Պետ.Տուլսկ.	—	—	101 › 50	›
— — Կիևի	—	—	101 › 75	›
— — Մօսկվայի	—	—	103 › —	›
— — Բեսարաբ. Տավր.	—	—	100 › —	›
— — Նիժ. Սամար.	—	—	101 › 50	›
— — Վիլնայի	—	—	100 › 75	›
— — Թիֆլիսի	—	27 և 43 տ.	— › —	›
— — Բուխարայի	—	18 և 43 տ.	— › —	›
Վօլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները			575 › 50	›
Ռուսաց երկաթուղիների դլիաս. ընկ.			282 › 50	›
Ռիբինսկ-Վօլգովի ընկ.			98 › 50	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ.			94 › 75	›
Մօսկվայի քաղաք. օրլիգացիաներ .			95 › 25	›
Օդէսայի — — .			93 › 25	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. .			— › —	›
Նոր երկաթուղային բէնտա . .			98 › 50	›
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը			— › —	›
Գրաւ. Թղ. Ազնւ. բանկի . . .			98 › —	›

Ս. Պետերբուրգի բօրսայի արտադրութիւնը ֆոնդերի վերաբերմամբ ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, 5-ին մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒԷՆ) դէպի Կ. Պօլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պօրա-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԿՀԱՐԴԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՐԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻ։ 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ ՐԻՅԻ, վերադարձած լինելով ճանապարհորդութիւնից, ընդունում է ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ամեն առաւօտ իր բնակարանում, Ստարօտարսկնայա փողոց, տուն № 17. 2—4

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, մարտի 4-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Դարանիօնին և Թիֆլիսում պ. ԲԷՆՕԻՆ, Նախկին Արծրունի դպրեվանքում, № 103. 4—4

27—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց)։

Ստացված է՝ Մալց-Էկստրակտ և հաղի համար կոնֆեկտներ՝ «Մի հաղիր»։ Ձկան լուղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրօվանսի ձէթ, քացախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԹԵՐԻ ԱՄԵՆԱԼԱԻ ԱՆԴԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՑ, լուզակ՝ փոչիով և գունտերով. բծեր հանելու դեղեր, կօշկանների և վէռնիճ կօշիկների համար. սամավարը և առհասարակ մետալեայ գործիքները պրբելու խլ և փոչի։ ՇՎԵՏԱԿԱՆ ԳՐԵՖՍԲԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՑԻ ԼՈՒՅՑԿԻ, և տոռեսութեան ուրիշ պարագաներ։ Լէնգվիլի թխանոց բալլամը. թխանոց կրէմ. Էմուլսիա և Էնգլունտի կօսմետիկան սրբիչներ, երեսի և մարթու թարմութիւնը պահպանելու համար։ Կինունէնի Էլէօպատ մազերը պնդացնելու համար։

Դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում։

Մարտի 1-ի վիճակահանութեան համար

ԵՂԲԱՐՑ ԾՕՎԻՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Սիօնի փողոց, քարվանսարայ Անանօվի)

ՎԱՃԱՌՈՒՄ է խաղատոմսակներ II փոխառութեան և փոխ է տալիս նոցա գրաւականով

210 ՐՈՒԲԼԻ։

ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է 50 կօպ. հատը։ 10 տոմսակից աւելին 45 ԿՕՊ. ՀԱՏԸ. 20 տոմսակից աւելին 40 ԿՕՊ. ՀԱՏԸ։ 6—8

ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՑՐԱԲԱՂԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիօնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտնքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կօսմետիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բերթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց մինչև կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երևոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և դեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-զվիցերենեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա դնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեչտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիա Գուտմանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 85—100

ԶԲԿԻՆԵԱՆՑ Ս. ԿԱԲԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՂԱՅՈՑ ԹԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ սկսվում է փետրվարի 25-ից։ 2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի $^1/_4$ արժէ 60 կ.։

Հեղուկ բազլինջների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 բուբլի։

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դոզակի գինը 1 ր. 20 կ. դուտապերչի մեքենան առանձին. $^1/_2$ դոզակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիա Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դոզակի գինը 1 բուբլի։

Կուղբի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կօպ.

Մազերի ներկ, սև, շագանակագոյն և չէկ։ Մի անդամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ։ Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից։ Արկղիկը 3 բուբլի.

Բիա. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 40—100

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻԶՈՒՈՎ.)

ՀՈՂԱՑԻՆ ԵՒ ԱՆԶՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Թոհաթլեանի. 1 շրջան։ Գինը 35 կ։ Թիֆլիսի գրավաճառանոցներում։ 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում։ 18—30

Дозволено цензурою, Тифлисъ 25 Февраля 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.